Մոնիթորինգ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԵԱՀԿ-Ն ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԿԻՐԱԿԱՆԱՑՆԻ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԵԱՀԿ ներկայացուցիչները հերթական մոնիթորինգը կանցկացնեն Ադրբեջանի եւ Հայաստանի զինված ուժերի շփման գծում: «Մենք մտադիր ենք հոկտեմբերի 24-ին հերթական մոնիթորինգն անցկացնել ադրբեջանական եւ հայկական զորքերի շփման գծում Ադրբեջանի Թարթառի շրջանի տարածքում»,- «Ինտերֆաքս-Ադրբեջան» գործակալությանը հինգշաբթի հայտնել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկը:

ԵԱՀԿ ներկայացուցիչն ասել է նաեւ, որ տեղեկություններ չունի, որ կհաստատեին որոշ ԶԼՄ-ների այն հաղորդումները, թե իբր հայկական կողմը փորձել է ապակայունացնել իրադրությունը շփման գծում հոկտեմբերի 15-16-ի Բաքվի անկարգությունների ժամանակ: